ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
<<ԳՅՈՒՄՐՈՒ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ>>
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆ

«25» հուլիսի 2025թ.

3104, Գյումրի
Վարդանանց հրապարակ 1
Հեռ (+374 312) 2-22-14
էլ. փոստ gyumri.komunal@mail.ru

Ա/Ձ Տարոն Մաթևոսյանին (ՀՎՀՀ՝ 67110423)
(հասցե՝ ՀՀ, ք. Վանաձոր, Սևակի փող. 47, բն. 12,
էլ. հասցե՝ vanpolimed.info@mail.ru)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրու կոմունալ ծառայություն» ՀԲՀ-ի և Ա/Ձ Տարոն Մաթևոսյանի միջև 02.07.2025 թվականին կնքվել է համաձայնագիր, որով ուժի մեջ է մտել 24.06.2025 թվականին կնքված N ԳԿԾՀԲՀ-ԳՀԱՊՁԲ-09/25-01 ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրի շրջանակներում Վաճառողը չի կատարել Պայմանագրի N 1 հավելվածով ստանձնած պարտավորությունները՝ մատակարարել է անպատշաճ որակի՝ տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանքներ: Մասնավորապես՝

Հուլիսի 09-ին մատակարարված ներկերն օգտագործվելուց առաջ փորձարկվել են Մատակարարի ներկայությամբ: Սպիտակ ներկը շատ խիտ է, այն լավ խառնվել է համապատասխան լուծիչով, բայց նստվածքը չի անհետացել՝ ներկանյութը ամբողջությամբ չի լուծվել: Ներկը ներկագլանիկով փորձարկվել է մաքուր ասֆալտապատ չոր հարթության վրա: Տարան բացելուց հետո ներկանյութի վրա շատ արագ առաջանում է փառ՝ հաստ ներկաշերտ, որն անհրաժեշտ է հեռացնել ներկն ամեն անգամ օգտագործելուց առաջ, ինչը հանգեցնում է ներկանյութի, աշխատանքի, ժամանակի կորուստներ: Ներկի անհամապատասխան որակի պատճառով շարքից դուրս են եկել գծանշման աշխատանքային գործիքները՝ ներկագլանիկները, վրձինները, ինչպես նաև անհնարին է աշխատել գծանշման սարքի միջոցով:

Դեղին ներկը ևս ունի նույն որակական թերությունները, գույնը դեղինի փոխարեն՝ մուգ դարչնագույն:

Արձանագրված անհամապատասխանությունները շտկելու նպատակով Մատակարարը համաձայնվել է ներկայացնել ներկանյութի նոր փորձանմուշ:

Հուլիսի 12–ին Մատակարարը հանձնել է նոր փորձանմուշ, որի տարան բացելուց հետո արձանագրվել է, որ ներկանյութը շատ ջրալի է, որով աշխատելու դեպքում անհրաժեշտ է քսել առնվազն 3 շերտով, որպեսզի ապահովվի նորմալ ծածկողականություն, ներկանյութի գույնը սպիտակի փոխարեն՝ բեժ/մոխրագույն, ունի նույն որակական թերությունները ինչ մատակարարված առաջին խմբաքանակը:

Մատակարարին նորից հնարավորություն է տրվել շտկել եղած թերությունները:

Հուլիսի 15-ին Մատակարարը հանձնել է փորձանմուշի 2 տարա, 1-ին տարան՝ «Ռուսական» գրառումով, 2-րդը՝ «Կորեական»: Արձանագրվել է, որ նշված փորձանմուշն ավելի ջրալի է, ունի նույն որակական թերությունները ինչ մատակարարված նախորդ խմբաքանակը, իսկ գույնն ավելի մուգ բեժ/մոխրագույն է: Երեք օր անց նույն տարաները բացվել են ներկանյութերը կրկին փորձարկելու համար, տարաների մեջ առկա էին դեղնաշականակագույն լուծույթ՝ հավանաբար տեղի է ունեցել քիմիական նյութերի անջատում, այն խառնելուց հետո ներկանյութը ստացել է ավելի մուգ գույն:

Մատակարարին կրկին տրվել է հնարավորություն եղած անհամապատասխանությունները շտկելու համար:

Հուլիսի 23-ին Մատակարարը ներկայացրել է փորձանմուշի ևս մեկ խմբաքանակ, որը նորից փորձարկվել է Մատակարարի ներկայությամբ՝ ներկը ներկագլանիկով քսվել է մաքուր ասֆալտապատ չոր հարթության վրա, որտեղ ներկը նորից ստացել է բեժ/մոխրագույն երանգ: Այս փորձանմուշը ևս ունի նախորդ խմբաքանակների որակական թերությունները:

Հուլիսի 25-ին Մատակարարը կրկին ներկայացրել է նոր փորձանմուշ, որը շատ ջրալի է, գույնը՝ մոխրագույն, որն ավելի է մգանում ասֆալտապատ հարթության վրա քսելուց հետո՝ մուգ մոխրագույն, ներկը 3-4 անգամ քսելուց հետո չի ապահովում նորմալ ծածկողականություն: Տարայի մեջ ներկանյութի վրա անմիջապես առաջանում է փառ, իսկ ներկագլանիկը չորանում է ու առաջանում են ներկանյութի մածուցիկ թելիկներ:

Այսպիսով ներկերի որակի անհամապատասխանությունները չեն շտկվել, մատակարարված ոչ մի խմբաքանակի ներկ ֆիզիկապես չի համապատասխանել տեխնիկական պայմաններին:

Համաձայն Պայմանագրի 2.1.7 կետի, Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝

Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով ու Պայմանագրի 8.11-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրու կոմունալ ծառայություն» ՀԲՀ-ն միակողմանի ամբողջությամբ լուծում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրու կոմունալ ծառայություն» ՀԲՀ-ի և Ա/Ձ Տարոն Մաթևոսյանի միջև 24.06.2025 թվականին կնքված N ԳԿԾՀԲՀ-ԳՀԱՊՁԲ-09/25-01 ծածկագրով գնման պայմանագիրը: Պայմանագիրը կհամարվի միակողմանի ամբողջությամբ լուծված սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Ա/Ձ Տարոն Մաթևոսյանին տրվում է 5 օրացուցային օր իր կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարները՝ **1908750** /մեկ միլիոն ինը հարյուր ութ հազար յոթ հարյուր հիսուն/ ՀՀ դրամ որակավորման ապահովման և **1272500** /մեկ միլիոն երկու հարյուր յոթանասուներկու հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ պայմանագրի ապահովման համար ներկայացված գումարները ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության «900212000211» գանձապետական հաշվին փոխանցելու նպատակով, ինչպես նաև Պայմանագրի 6.3 կետով սահմանված տուգանքը, որը կազմում է

48300 /քառասունութ հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ:

Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրու կոմունալ ծառայություն» ՀԲՀ՝ ք. Գյումրի Վարդանանց հրապարակ 1 հասցեով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու և վճարման կտրոնները չներկայացնելու դեպքում Ա/Ձ Տարոն Մաթևոսյանին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, Մատակարարի տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Մատակարարի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերը՝ որակավորման և պայմանագրի ապահովումները, սահմանված կարգով կներկայացվեն Ա/Ձ Տարոն Մաթևոսյանին սպասարկող բանկ վերոնշյալ գումարները գանձելու նպատակով:

Տեղեկացնում ենք, որ եթե վճարման ենթակա գումարները փոխանցվեն նշված հաշվեհամարին, ապա Մատակարարի նկատմամբ չեն կիրառվի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 2-րդ մասով նախատեսված դրույթները:

Տնօրենի ժ/պ՝ **Ա. Մկրտչյան**